

**Օ Պ Ե Ր Ա Տ Ի Վ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

**«06» մարտի 2017թ. 09:00-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՓՎ ՃԿԿ-ՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ**

**«05» մարտի**

Ժ. 11:25-ին ՄՃԿԿ ահազանգ է ստացվել քաղաքացի Շուխյանից այն մասին, որ ք.Աշտարակ Պռոշյան փողոց 13 շենքի տանիքից երկաթյա իր է կախված, որը իրենից վտանգ է ներկայացնում:

Ժ.11:31-ին Թիվ 19 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ մեկնել է կանչի վայր, տեղ են հասել Ժ.11:33-ին (վերադարձ՝ Ժ.13:00-ին):

Ժ. 12:55-ին պարզվել է, որ տանիքից կախված երկաթյա մետաղաշար է, հրշեջ-փրկարարները կատարել են երկաթյա մետաղաշարի հեռացում:

**Ժ.22:50-ին** ՄՃԿԿ տեղեկատվություն է ստացվել Աշտարակի ՈՍ բաժնի պատասխանատու փ/գ-տ Թիթիզյանից հ/հ 1-02 այն մասին, որ Ժ 22:00-ի սահմաններում Աշտարակ –Ղազարավան ավտոճանապարհին տեղի է ունեցել **ՃՏՊ**, անհրաժեշտ է փրկարարների օգնություն, տուժածներին տեղի ուժերով տեղափոխել են ք.Երևան Արմենիա ԲԿ:

Ժ.22:51-ին ահազանգի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է Աշտարակի ՀՓՋ:

Ժ.22:52-ին Թիվ 19 ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ մեկնել է կանչի վայր: Հասել են կանչի վայր Ժ.22:59-ին, (վերադարձ Ժ.23:15 -ին) :

Պարզվել է ,որ Աշտարակ- Ղազարավան ավտոճանապարհի 5-րդ կմ-ին << ՎԱՋ 21099>> մակնիշի 34 FD 132 պ/հ ավտոմեքենան բախվել է գազատար խողովակաշարի սյանը (վարորդ՝ ծնված 1984թ. Արթուր Ավագյան), կա 2 վիրավոր, տեղի ուժերով տեղափոխել են ք.Երևան Արմենիա ԲԿ: Հրշեջ փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան և փակել են ավտոմեքենայի գազաբալոնի փականը:

**Կրտսեր հրահանգիչ**

**փ/ծ ավ. ենթասպա**

**Ի.Հովսեփյան**